

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/6

20 հունվարի 2015 թ.

Քննարկվեց «Կարթել-Աննա» ՍՊԸ գանգատը ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժամանակաշրջանը սխալ ընտրելու հետևանքով կիրառված պատասխանատվության միջոցները վերանայելու վերաբերյալ:

«Կարթել-Աննա» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Կարթել-Աննա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) զբաղվում է մանրամեծածախ առևտրով, համարվում է ԱԱՀ վճարող, ընդ որում, վերջին 10 տարում հանդիսացել է ամսական ԱԱՀ վճարող: Աշխատանքային գործունեության հաշվետու ողջ ժամանակաշրջանում ընկերությունը բարեխղճորեն կատարել է իր հարկային պարտավորությունները: Չնայած, որ 2013 թվականին ընկերության իրացման շրջանառությունը էապես կրճատվել է, ելնելով նախկին փորձից ընկերությունը 2014թ.-ի ընթացքում շարունակել է ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջան համարել ամիսը (համարվել է ԱԱՀ ամսական հարկ վճարող) և ժամանակին կատարել է ԱԱՀ-ի գծով պարտավորությունները:

Հաշվետվությունները ԱԱՀ-ի ամսական հարկ վճարողների մասով սահմանված կարգով ներկայացվել են հարկային մարմնին և վերջիններս պարբերաբար ընդունվել են (ընկերությունը ներկայացրել է 8 /ութ/ ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ):

Մաշտոցի ՀՏ 08.10.2014թ. կամերալ ուսումնասիրությունների արձանագրության համաձայն ընկերությունը պետք է կատարեր համապատասխան ճշգրտումներ և ներկայացներ ԱԱՀ-ի եռամսյակային հաշվետվություններ, որը և արձանագրությունը ստանալուց հետո կատարվել է:

Ի սկզբանե պարզ է, որ ԱԱՀ-ի ամսական հարկ վճարողները գտնվում են համեմատաբար ավելի խիստ հարկային ռեժիմում (տվյալ ամսում հաշվանցման ենթակա դեբետային գումարների մասով բանկային փոխանցման առկայություն և այլն, ընկերությունն առաջացած ԱԱՀ-ի գումարները պետք է վճարի յուրաքանչյուր ամիս՝ գրկվելով դրանք բիզնեսում ևս երկու ամսով ներդնելու հնարավորությունից և այլն):

Մաշտոցի հարկային տեսչության 28.11.2014թ. թիվ 743 որոշման համաձայն՝ որոշվել է «Կարթել-Աննա» ՍՊԸ-ից գանձել ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար 2,214,161 դրամի չափով: Մաշտոցի հարկային տեսչության մեկ այլ՝ 20.12.14թ. թիվ 029118 որոշմամբ 2,214,161 դրամի չափով արգելանք է դրվել ընկերության գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների վրա՝ խափանելով ընկերության բնական գործունեությունը:

Ելնելով վերոշարադրյալից՝ ընկերությունը խնդրում է հանձնաժողովին կասեցնել (չեղյալ համարել) Մաշտոցի հարկային տեսչության վերոնշյալ որոշումները, ընկերության գույքը և դրամական միջոցները հանել արգելանքից՝ ընկերությանը հնարավորություն ընձեռելով շարունակել իր գործունեությունը և պետության հանդեպ կատարել իր պարտավորությունները, հակառակ դեպքում ընկերության վրա նման

լրացուցիչ հարկային բեռի ավելացումը հարցականի տակ կդնի նրա հետագա գործունեությունը:

« ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

« ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Կարթել-Աննա» ՍՊԸ կողմից 2014 թ-ի հունվար ամսից մինչև օգոտոս ամիսն (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար հարկային մարմին են ներկայացվել ավելացված արժեքի հարկի ամսական հաշվարկներ: Մակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերության 2013 թ-ի իրացման շրջանառությունը չի գերազանցել 100 մլն դրամը, հետևապես ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, պետք է ներկայացվեին ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ:

«Կարթել-Աննա» ՍՊԸ-ում իրականացվել է կամերալ ուսումնասիրություն, որի արդյունքում 08.10.2014 թ-ին կազմված արձանագրությամբ ընկերությանը հայտնվել է ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժամանակաշրջանը յուրաքանչյուր եռամսյակը համարվելու վերաբերյալ:

Կամերալ ուսումնասիրության վերաբերյալ 08.10.2014 թ-ի անագրությունը ստանալուց հետո ընկերությունը կատարել է համապատասխան ճշգրտումներ և ներկայացրել է ԱԱՀ-ի եռամսյակային հաշվետվություններ:

Հաշվի առնելով վերոգրյալ փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15.1-րդ հոդվածի դրույթներով ընկերության կողմից ներկայացված ԱԱՀ-ի ամսական հաշվարկները համարվել են չներկայացված: Արդյունքում, ընկերության նկատմամբ կիրառվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության միջոցները՝ գումարով 2.214.161 դրամ:

Բացի այդ, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի դրույթներով ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի կողմից 28.11.2014 թ-ին ընդունվել է թիվ 743 որոշումը «Կարթել-Աննա» ՍՊԸ-ից 2.214.161 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Իր հերթին, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածի դրույթներով ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 20.12.2014 թ-ին հրապարակվել է թիվ ԱՀ 029118 հանձնարարագիրը՝ ընկերությանը պատկանող գույքի վրա չկատարված պարտավորությունների չափով արգելանք դնելու մասին: Արդյունքում 20.12.2014 թ-ին ընդունվել է ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ թիվ 029118 որոշումը, որով արգելանք է դրվել ընկերությանը պատկանող գույքի, բանկային հաշիվների և դրամարկղի վրա՝ գումարով 2.214.161 դրամի չափով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ընկերության կողմից ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ ներկայացնելու փոխարեն ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացվելու պայմաններում պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ի գումարների չափը չի փոփոխվել, այսինքն՝ դրա հետևանքով պետական բյուջե պակաս ԱԱՀ-ի գումար չի վճարվել: Ընդհակառակը, ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ

ներկայացվելու արդյունքում ընկերության կողմից ԱԱՀ-ի գծով պարտավորությունները կատարվել են սահմանված ժամկետից շուտ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկի հաշվարկներն ընկերության կողմից ամսական կտրվածքով ներկայացվել են թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, կատարված են:


Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Կարթել-Աննա» ՍՊԸ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«Կարթել-Աննա» ՍՊԸ գանգատը բավարարելու

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ